

ԹՈՒՉՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Տեղեկացնում ենք, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թռիչքային անվտանգության հարցերով փորձագետ ներգրավվելու նպատակով դիմել է մեկ քաղաքացի՝ Ալլա Միհրանի Խաչատրյանը:

Հայտնում ենք, որ Ալլա Միհրանի Խաչատրյանը բավարարում է որպես Կոմիտեի թռիչքային անվտանգության հարցերով փորձագետ ներգրավվելու Հայաստանի Հանրապետության կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշմամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև Կոմիտեի նախագահի 18.02.2021թ. N 52-Ա հրամանով հաստատված Կոմիտեի թռիչքային անվտանգության հարցերով փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագրի պահանջներին, և նրա հետ 24.02.2021թ.-ին կնքվել է պայմանագիր՝ 24.02.2021թ.-ից մինչև 01.05.2021թ. ժամկետով՝ ներգրավելով որպես թռիչքային անվտանգության հարցերով փորձագետ: